ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվի մարտի 18-ին, Ծաղկազարդի օրը, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Էջմիածնի միաբանության անդամ 26-ամյա Ստեփանոս ավագ սարկավագ Տեր-Ստեփանյանը, Վեհափառ Հայրապետի բարեհաճ ցանկությամբ, ձեռնադրվեց աբեղա։ Նորընծա աբեղան իր անուշ ձայնի համար վերանվանվեցավ Կոմիտաս։ Ձեռնադրությունը կատարեց գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը, խարտավիլակությամբ Մայր Տաճարի ավագ դասապետ Տ. Նիկողայոս ավագ քահանա Բավեյանի։

***

Հուլիսի 4-ին ինքնաթիռով արտասահմանից Մոսկվայի վրայով Երևան ժամանեց Էջմիածնից արտասահման մեկնած պատվիրակությունը, գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի գլխավորությամբ։ Պատվիրակությանը ընկերակցում էին եպիսկոպոսական ձեռնադրություն ստանալու համար Մայր Աթոռ Ս. Էջմիածին եկող Երուսաղեմի հայոց պատրիարքական տեղապահ գերաշնորհ Տ. Եղիշե վարդապետ Տերտերյանը, Տ. Սուրեն վարդապետ Քեմհաճյանը, Տ. Նորայր վարդապետ Պողարյանը։ Գերագույն Հոգևոր Խորհրդի քարտուղար պ. Հ. Ագուլյանը կանխօրոք մեկնել էր Մոսկվա՝ դիմավորելու նրանց և ուղեկցելու Ս. Էջմիածին։

Օդանավակայանում հյուրերին դիմավորեցին Տ. Սահակ և Տ. Վազգեն ծայրագույն վարդապետները և Հոգևոր Ճեմարանի ռեկտոր պ. Մ. Մինասյանը։ Օդանավակայանի դահլիճում հյուրերին ողջույնի խոսք ասաց Տ. Սահակ Ծ. վարդապետը։ Պատասխան խոսքով հանդես եկան գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսը և պատրիարքական տեղապահ Տ. Եղիշե վարդապետը։

***

Հունիսի 10-ին Մայր Տաճարում, Ս. Պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ, հանդիսավոր հոգեհանգիստ կատարվեց Կոստանդնուպոլսի նախկին պատրիարքական տեղապահ հոգելույս Տ. Գեորգ արքեպիսկոպոս Արսլանյանի հիշատակին։

***

Հուլիսի 7-ին Մայր Աթոռ այցելեց Շվեդիա-ՍՍՌՄ ընկերության պատվիրակությունը, որի կազմի մեջ կային պրոֆեսորներ, դրողներ, բանաստեղծներ և այլ մասնագիտության անձինք։ Հյուրերը դիտեցին տաճարը, թանգարանը և Վեհարանը։ Նրանք վերջում շնորհակալություն հայտնեցին և դոհ հեռացան Մայր Աթոռից։

***

Հուլիսի 8-ին Մայր Տաճարում, ազգիս Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գեորգ Զ. Սրբազնագույն Կաթողիկոսը, խուռն բազմության ներկայությամբ, կատարեց եպիսկոպոսական ձեռնադրություն։ Եպիսկոպոս ձեռնադրվեցին Ս. Երուսաղեմի հայոց պատրիարքական տեղապահ գերաշնորհ Տ. Եղիշե վարդապետ Տերտերյանը, Մայր Տաճարի ավագ լուսարար Տ. Սահակ Ծ. վարդապետ Տեր-Հովհաննիսյանը, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց ուխտի միաբաններ Տ. Սուրեն վարդապետ Քեմհաճյանը և Տ. Նորայր վարդապետ Պողարյանը, և Ռումինահայ թեմի առաջնորդ Տ. Վազգեն Ծ. վարդապետ Պալճյանը։

Ի պատիվ նորընծա եպիսկոպոսների, Վեհարանում տեղի ունեցավ ճաշկերույթ Վեհափառ Հայրապետի և մի շարք հյուրերի ներկայությամբ։

***

Ռումինահայ թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանի և Կոնստանցայի հայ համայնքի և քաղաքական խորհրդի միջնորդությամբ, Տ. Համազասպ ավագ քահանա Պետիկյանին՝ նրա ծննդյան 80-ամյակի և ուսուցչական գործունեության 50-ամյակի կապակցությամբ, որպես ժրաջան, նվիրված և հավատարիմ գործիչ, Ամենայն Հայոց Հայրապետը սույն թվի հուլիսի 18-ին շնորհել է օրհնության կոնդակ։

***

Հուլիսի 15-ին Մայր Տաճարում եպիսկոպոսական իր անդրանիկ Ս. Պատարագը մատուցեց Ս. Երուսաղեմի հայոց պատրիարքական տեղապահ գերաշնորհ Տ. Եղիշե Նորընծա եպիսկոպոսը։ Տ. Տ. Սուրեն, Նորայր և Վազգեն եպիսկոպոսներն ևս այդ օրը իրենց եպիսկոպոսական անդրանիկ Ս. Պատարագները մատուցին Երևանի Ս. Սարգիս, Ս. Զորավար և Ս. Հովհաննես եկեղեցիներում։ Պատարագներին ներկա էր հավատացյալների հոծ բազմություն։ Պատարագիչ սրբազանները քարոզեցին հավուր պատշաճի։

***

Հուլիսի 22-ին Մայր Տաճարում եպիսկոպոսական իր անդրանիկ Ս. Պատարագը մատուցեց նորընծա Տ. Սահակ եպիսկոպոսը։

***

Օգոստոսի 19-ին, Վեհափառ Հայրապետի կարգադրության համաձայն, Մայր Տաճարում, Ս. Պատարագից հետո, կատարվեց հոգեհանգիստ՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի հանգուցյալ անդամ բանասեր Երվանդ Շահազիզի հիշատակին։

***

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանն այս տարի հաջողությամբ փակեց ուսումնական տարին։ Այդ առթիվ Հոգևոր Ճեմարանի մեծ լսարանում հուլիսի 25-ին տեղի ունեցավ հանդես, որին ներկա գտնվեց նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսը։ Այս տարի Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը տվեց ինը շրջանավարտներ, որոնց ավարտական շարադրություններն ընդունված են «լավ» և «գերազանց» գնահատականներով[1]։

1. Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը առայժմ համարում տպագրելու է Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի շրջանավարտների ավարտական շարադրությունների ամփոփումները։— ԽՄԲ.։